

«ՊԱՐ-ԱՐՏ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Ֆինանսական հաշվետվություններ

Անկախ աուդիտորական եզրակացություն

2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ

«ՊԱՐ-ԱՐՏ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Հայաստանի Հանրապետություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բաժին	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ / ՀԿ անդամ է, ՀԿ խորհրդի
21.11.2024թ-ի թիվ 93-Ա որոշում/

Ռեեստրում գրանցման համարը թիվ /1240916/, գրանցման ամսաթիվը՝
21.11.2024թ.,

Անկախ աուդիտորի ներկայացում

«Պար-Արտ» ՍՊԸ մասնակիցներին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Պար-Արտ» ՍՊԸ այսուհետ «Ընկերություն» ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ «Վերապահումով կարծիք»-ի հիմք բաժնում նկարագրված հարցի հնարավոր ազդեցությունից, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմք

Մենք նշանակվել ենք ընկերության աուդիտոր 2025թ Մայիսի 12-ին, ուստի հնարավորություն չենք ունեցել հետևելու պաշարների գույքագրման գործընթացին 2024թ-ի տարվա վերջում: Մենք անկարող էինք իրականացնել այլընտրանքային ընթացակարգեր, որպեսզի ինքներս համոզվեինք պաշարների առկայության և քանակի վերաբերյալ 2024թ-դեկտեմբերի 31-ի դրությամբ, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ ներառված են 932479,0 հազ դրամ գումարով: Նշված հարցի արդյունքում, մենք անկարող էինք որոշել արդյոք որևէ ճշգրտում անհրաժեշտ է պաշարների, ինչպես նաև դրա հնարավոր հետևանք կուտակված շահույթի ցուցանիշի, ինչպես նաև տարվա շահույթի գծով ֆինանսական հաշվետվությունների մեջ:

Մենք առողիտն անցկացրեցինք Առողիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այս ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Առողիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների առողիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք ընկերությունից՝ ֆինանսական հաշվետվությունների առողիտին վերաբերող էթիկայի պահանջներին համապատասխան համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄ կանոնագիրք) և Հայաստանի հանրապետությունում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների առողիտին վերաբերող էթիկայի պահանջների և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները համաձայն այդ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան առողիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության համադրելի տեղեկատվությունը՝ 2023թ-ի ֆինանսական հաշվետվությունները առողիտի չեն ենթարկվել:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի ընկերությունը լուծարելու կամ ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Առողիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության առողիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ

խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացված աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում կասկածամտություն: Ի լրումն մենք նաև՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք կհանդիսանան աուդիտորի կարծիք արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերելու ռիսկը ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառած հաշվապահական հաշվառման սկզբունքների տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելը, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա գնահատում արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել կազմակերպության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե աուդիտորը եզրահանգում է, որ առկա է էական անորոշություն, ապա պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, իսկ եթե այդ բացահայտումները բավարար չեն, ապա ձևափոխել կարծիքը: Աուդիտորի եզրահանգումները հիմնված են մինչև աուդիտորի եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը

- Երբ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են ճշմարիտ ներկայացման հիմունքի համաձայն, գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը ներառյալ բացահայտումները, ինչպես նաև

ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործառույթների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը

-ի լրումն այլ հարցերի կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցում ենք աուդիտորի առաջադրանքների պլանավորած շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի ներառյալ ներքին հսկողության վերաբերող նշանակալի թերությունները:

Տնօրեն, աուդիտի ղեկավար
«Ռեպորտ Իսա» ՍՊԸ

Հայկուշ Կարապետյան

Հայաստանի Հանրապետություն

ք. Երևան Լվովյան 22/24

2025թ. Հունիս 19




առ 31-ը դեկտեմբերի 2024թ դրությամբ

ԱԿՏԻՎՆԵՐ

11-ից 26-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ռազմիկ Պետրոսյան



2024 թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

11-ից 26-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Աստիտորի որակավորում Ա0052




Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
«Պար-Արտ» ՍՊԸ
2024 թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար


	Կանոնադրական կապիտալ	Զբաղիված շահույթ	հազար դրամ Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2022թ.	50	1,239,246	1,239,296
Տարվա շահույթ	-	150,257	150,257
Հայտարարված շահաբաժիններ	-	(1,231,579)	(1,231,579)
Կանոնադրական կապիտալի համալրում	61,570	-	61,570
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2023թ.	61,620	157,924	219,544
Տարվա շահույթ	-	216,926	216,926
Հայտարարված շահաբաժիններ	-	(157,895)	(157,895)
Կանոնադրական կապիտալի համալրում	7,894	-	7,894
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2024թ.	69,514	216,955	286,469

11-ից 26-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Ռազմիկ Պետրոսյան




Գլխավոր հաշվապահ
Արման Չատինյան
Աուդիտորի որակավորում №0052



Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
«Պար-Արտ» ՍՊԸ
2024թ. -ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	01/01/2024- 31.12.2024	01/01/2023- 31.12.2023
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	հազար դրամ	հազար դրամ
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	13,778,249	12,151,364
Վճարումներ մատակարարներին	(11,301,855)	(11,641,289)
Վճարումներ աշխատակիցներին	(514,830)	(479,185)
Վճարումներ բյուջե և զինծառայողների հիմնադրամ, այդ թվում՝ Ռեզիդենտների շահութահարկ	(663,367)	(453,765)
Այլ մուտքեր	(28,902)	(31,253)
Այլ ելքեր	1,083	450
Գործառնական գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(50,063)	(48,479)
	1,249,217	(470,904)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների վաճառք	60	-
Հիմնական միջոցների ձեռք բերում	(13,374)	(99,882)
Տրամադրված փոխառություններ	(984,000)	(270,000)
Տրամադրված փոխառությունների մարում	846,000	1,224,000
Ստացված տոկոսներ	5,887	6,678
Ներդրումային գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(145,427)	860,796
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Կանոնադրական կապիտալի համալրում	7,894	61,570
Ստացված փոխառություններ	511,336	855,141
Փոխառությունների մարում	(436,336)	(199,740)
Շահաբաժինների վճարում	(150,000)	(1,170,000)
Ֆինանսական գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(67,106)	(453,029)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	1,036,684	(63,137)
Արտաժույթի փոխարժեքային տարբերություններ	18,021	21,102
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	534,019	576,054
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ	1,588,724	534,019

11-ից 26-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Ռազմիկ Պետրոսյան

Գլխավոր հաշվապահ
Արման Զատինյան
Պաշտոնի որակավորում Ա0052

Ֆինանսական հաշվետվություններ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Պար-Արտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Պար-Արտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

1. Ընդհանուր տեղեկություններ

«Պար-Արտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) իրավաբանական անձ հանդիսացող առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է և պետական ռեգիստրում գրանցվել է 2018թ մայիսի 11-ին, գրանցման համարն է 271.110.1017439, ՀՎՀՀ-ն՝ 01281922:

Ընկերության կանոնադրական կապիտալը հաշվետու ամսաթվի դրությամ կազմում է 69,514 հազար դրամ, իսկ արդեն սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ 80,269 հազար դրամ:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան 0078, Մարգարյան 23/6, իսկ գործունեության հասցեներն են՝

- ք.Երևան, Մարգարյան 23/6,
- ք.Երևան, Անդրանիկի 148/2:

Ընկերությունը «Kaiser» ապրանքանիշի ներքո զբաղվում է սուպերմարկետի գործունեությամբ, որը ներառում է նաև սեփական արտադրության հասարակեղենի և խմորեղենների վաճառքը:

Ընկերության աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը 2024 թվականին կազմել է 418, իսկ 2023 թվականին՝ 404 հոգի:

Գործարար միջավայր

ՀՀ տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխություններից, ինչպես նաև հարկային և օրենսդրական այլ համակարգերի զարգացումից:

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից, և քանի որ, Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում, վերոնշյալ փոփոխություններն ազդեցություն են ունենում Ընկերության վրա:

Հայաստանյան գործարար միջավայրի վրա շարունակում է իր ազդեցությունն ունենալ նաև հայ-ադրբեջանական լարված հարաբերությունները, որը հանդիսանում է ՀՀ ներդրումային և գործարար միջավայրի ամենաէական խոչընդոտը:

Անորոշ է նաև ռուս-ուկրաինական հակամարտության ազդեցությունը հայաստանյան գործարար միջավայրի վրա երկարաժամկետ առումով, այն Հայաստանի տնտեսության տարբեր ոլորտների վրա ազդել է տարբեր կերպ:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար և պարբերաբար վերանայում է Ընկերության իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ, այնուամենայնիվ՝ ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

2. Համապատասխանությունը

Հաշվապահական հաշվառումը վարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

ՀՀ արժույթը ՀՀ դրամն է, որը Հնկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրված հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

4. Հաշվապահական կարևոր դատողությունները և գնահատման անորոշության հիմնական աղբյուրները

Ֆինանսական հաշվետվությունների կազմումը ղեկավարությունից պահանջում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք նշանակալի ազդեցություն են թողնում այդ հաշվետվություններում ճանաչված գումարների վրա: Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները վերանայվում են:

Անընդհատության սկզբունք. Հնկերության ղեկավարությունը պատրաստել է սույն Ֆինանսական հաշվետվությունները անընդհատության սկզբունքի հիման վրա: Ղեկավարության այս դատողությունները հիմնված են Հնկերության ֆինանսական վիճակի, ընթացիկ պլանների, գործառնությունների շահութաբերության և ֆինանսական ռեսուրսների մատչելիության, ինչպես նաև Հնկերության ապագա գործունեության նկատմամբ մակրոտնտեսական վերջին փոփոխությունների ազդեցության վերլուծության հիման վրա:

Փոխկապակցված անձանց հետ գործարքների սկզբնական ճանաչում. Բնականոն գործունեության ընթացքում Հնկերությունը ունենում է գործարքներ իր կապակցված կողմերի հետ: Դատողությունը կիրառվում է որոշելու, թե արդյոք գործարքները գնահատվում են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ առկա չէ ակտիվ շուկա նման գործարքների համար: Դատողության համար հիմք է հանդիսանում չկապակցված կողմերի հետ նման տեսակի գործարքների գնահատումը և արդյունավետ տոկոսադրույքի վերլուծությունը:

5. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագիրը

5.1. Զափման հիմքը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով:

5.2. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը, բացառությամբ հողամասերի, որոնց հաշվառման համար Հնկերությունն ընտրել է վերագնահատված արժեքով հաշվառման մոդելը: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և

ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Ընկերությունը կիրառել է հետևյալ մաշվածության հետևյալ ժամկետները.

Հիմնական միջոցի դաս	Մաշվածության ժամկետ (տարի)
Մեքենաներ և սարքավորումներ	8-10
Համակարգչային տեխնիկա	1-7
Տրանսպորտային միջոցներ	8
Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	8
Այլ հիմնական միջոցներ	8-20

5.3. Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման ընթացքում օգտագործելու համար:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով ՖԻՖՈ մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

5.4. Ակտիվների արժեզրկում

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատում է առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե առկա է որևէ այդպիսի հայտանիշ, ապա Ընկերությունը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

Եթե առկա է որևէ հայտանիշ, ըստ որի՝ ակտիվը կարող է արժեզրկված լինել, ապա փոխհատուցվող գումարը գնահատվում է առանձին ակտիվի համար: Եթե հնարավոր չէ գնահատել առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը, Ընկերությունը որոշում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին պատկանում է տվյալ ակտիվը (ակտիվի դրամաստեղծ միավոր):

Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև դրա փոխհատուցվող գումարը այն և միայն այն դեպքում, եթե ակտիվի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է, քան դրա հաշվեկշռային արժեքը: Այդ նվազումն իրենից ներկայացնում է արժեզրկումից կորուստ:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը հաշվառվում է վերագնահատված գումարով: Վերագնահատված

ակտիվի արժեքը կումից ցանկացած կորուստ դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

5.5. Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչում

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. Չափման կատեգորիաներ
Ընկերությունը դասակարգում է ֆինանսական ակտիվները՝ օգտագործելով հետևյալ չափման կատեգորիաները.

- չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- չափվում են իրական արժեքով այլ համապարփակ եկամուտի միջոցով և
- չափվում են ամորտիզացված արժեքով:

Պարտքային ֆինանսական ակտիվների դասակարգումն ու հետագա չափումը կախված է ակտիվների պորտֆելի կառավարման համար Ընկերության բիզնես մոդելից, և ակտիվի դրամական հոսքերի բնութագրերից:

Ֆինանսական ակտիվների արժեքը կում-ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստ

Ելնելով կանխատեսումներից, Ընկերությունը հաշվարկում է ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքների հետ կապված ակնկալվող պարտքային կորուստները և ճանաչում յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվների համար պարտքային կորուստների գնահատված պահուստը:

Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները ներկայացվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ հանած ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստը: Իրական արժեքով այլ համապարփակ եկամուտի միջոցով չափվող պարտքային գործիքների ամորտիզացված արժեքի փոփոխությունները, առանց ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստի, ճանաչվում են շահույթում կամ վնասում: Հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունները արտացոլվում են այլ համապարփակ եկամտում «այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող պարտքային գործիքներից եկամուտները՝ հանած ծախսերը» հոդվածում:

Ֆինանսական ակտիվների դուրսգրում

Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասնակիորեն դուրս են գրվում, երբ Ընկերությունը սպառել է դրանց հավաքագրելու բոլոր գործնական հնարավորությունները և եզրահանգել է, որ այդպիսի ակտիվների փոխհատուցման հետ կապված ակնկալիքները անհիմն են: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ապաճանաչում: Ընկերությունը կարող է դուրս գրել ֆինանսական ակտիվները, չնայած այդ գումարների վերականգնման (ստացման) համար կիրառվում են հարկադրման միջոցներ, բայց ողջամիտ ակնկալիքներ չկան:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչում

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ.

(ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ

(բ) Ընկերությունը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ

(գ) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու պարզևատրումները կամ

(դ) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ

Ֆինանսական հաշվետվություններ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

«Պար-Արտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

վերահսկողությունը:

Առևտրային դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերը չափվում են սկզբնական արժեքով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքերի, երբ գեղչման ազդեցությունը զգալի է: Այս դեպքում դեբիտորական պարտքը չափվում է գեղչված արժեքով:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները ներառում են դրամարկղում և բանկային հաշիվներում առկա դրամական գումարները, այդ թվում՝ կառուցապատողի հատուկ հաշիվներում սահմանափակված գումարները:

5.6. Ֆինանսական պարտավորություններ

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը

Ճանաչում

Ընկերությունը ֆինանսական պարտավորությունը ճանաչում է, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ապաճանաչում

Ընկերությունը ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչում է, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված կամ վճարվելիք հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Առևտրային կրեդիտորական պարտքեր

Սկզբնական ճանաչման պահին կրեդիտորական պարտքը չափվում է սկզբնական արժեքով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքերի, երբ գեղչման ազդեցությունը զգալի է: Այս դեպքում կրեդիտորական պարտքը չափվում է գեղչված արժեքով:

5.7. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները աշխատակիցների, ներառյալ տնօրենները և կառավարչական անձնակազմը, մատուցած ծառայության դիմաց կազմակերպության կողմից ցանկացած ձևով տրվող փոխհատուցումներն են: Ընկերությունը աշխատակիցների բոլոր այն հատուցումների ծախսումները, որոնց նկատմամբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանն ծառայություններ մատուցելու արդյունքում ձեռք են բերել իրավունք, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն, աշխատակցին ուղղակիորեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե վճարված գումարը գերազանցում է մինչև հաշվետու ամսաթիվը մատուցած ծառայությունից առաջացած պարտականության գումարը, Ընկերությունը այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ երբ մեկ այլ ՖՀՄՄ-ով պահանջվում է, որ ծախսումը ճանաչվի որպես ակտիվի արժեքի մաս, ինչպիսիք են պաշարները կամ հիմնական միջոցները: Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

ա) աշխատավարձը

բ) կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսին են վճարովի տարեկան արձակուրդը և ժամանակավոր անաշխատունակության նպաստը,

գ) պարգևավճարները:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

- (ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,
- (բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հնկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հնկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

5.8. Հասույթ

Հնկերությունը ապրանքների վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է, երբ բավարարված են հետևյալ բոլոր պայմանները.

ա) Հնկերությունը գնորդին է փոխանցում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը.

բ) Հնկերությունը չի պահպանում ոչ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, և ոչ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկում.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Հնկերություն.

ե) գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:

Սովորաբար սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների փոխանցումը գնորդին համընկնում է սեփականության իրավունքի կամ տիրապետման իրավունքի փոխանցման հետ:

Երբ ապրանքները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը:

Հնկերությունը ստանում է հասույթ նաև մարկետինգային և այլ համանման ծառայություններից: Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է, երբ բավարարված են հետևյալ բոլոր պայմանները.

ա) պայմանագրի կողմերը հաստատել են պայմանագիրը (գրավոր, բանավոր կամ այլ սովորական բիզնես գործելակերպի համաձայն) և պարտավորվում են կատարել իրենց համապատասխան պայմանագրային պարտականությունները.

բ) Հնկերությունը կարող է որոշակիացնել փոխանցվող ծառայություններին վերաբերող յուրաքանչյուր կողմի իրավունքները.

գ) Հնկերությունը կարող է որոշակիացնել փոխանցվող ծառայությունների վճարման պայմանները.

դ) պայմանագիրն ունի առևտրային բնույթ (այսինքն՝ պայմանագրի արդյունքում ակնկալվում է, որ կփոփոխվեն կազմակերպության ապագա դրամական միջոցների հոսքերի հետ կապված ռիսկերը, ժամկետները կամ գումարը). և

ե) հավանական է, որ Ընկերությունը կստանա այն հատուցումը, որն իրավունք ունի ստանալու, գնորդին փոխանցվող ծառայությունների դիմաց՝ որպես փոխանակում:

5.9. Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է:

Ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքները, որոնք հետևյալն են.

Արտարժույթ	31.12.2024	31.12.2023
1 ԱՄՆ դոլար	396.56 ՀՀ դրամ	404.79 ՀՀ դրամ
1 եվրո	413.89 ՀՀ դրամ	447.9 ՀՀ դրամ
1 ռուբլի	3.71 ՀՀ դրամ	4.5 ՀՀ դրամ

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

5.10. Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից) կիրառելով հարկերի դրույքները, որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառվեն մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն գեղջվում (դիսկոնտավորվում): Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Ընկերությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում վերականգնվում է այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Եկամուտ կամ ծախս ներկայացում

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և ներառվում են տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝

(ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ պետք է ճանաչվեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում.

(բ) ուղղակիորեն սեփական կապիտալում՝ պետք է ճանաչվեն ուղղակիորեն սեփական կապիտալում:

6. Հիմնական միջոցներ

	Մեքենաներ և սարքավորում- ներ	Համակարգ- չային տեխնիկա	Տրանսպոր- տային միջոցներ	Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Առ 01.01.2024թ.	212,188	4,799	12,881	154,307	81,280	465,456
Գնում	459	9,969	-	15,752	4,552	30,733
Օտարում/դուրս գրում	(267)	-	-	-	-	(267)
Առ 31.12.2024թ.	212,380	14,769	12,881	170,059	85,832	495,921
Մաշվածություն						
Առ 01.01.2024թ.	(131,952)	(3,337)	(6,778)	(58,153)	(14,229)	(214,450)
Հաշվարկ	(33,435)	(3,458)	(1,610)	(23,572)	(11,725)	(73,800)
Օտարում/դուրս գրում	276	-	-	-	458	734
Առ 31.12.2024թ.	(165,112)	(6,795)	(8,389)	(81,725)	(25,496)	(287,516)
Հաշվեկշռային արժեք						
Առ 31.12.2023թ.	80,237	1,462	6,103	96,153	67,050	251,005
Առ 31.12.2024թ.	47,269	7,974	4,493	88,334	60,336	208,405

Հաշվետու ամսաթվի դրությամբ ընկերությունն ունի 34,993 հազար դրամ սկզբնական արժեքով շահագործվող հիմնական միջոցներ, որոնց հաշվեկշռային արժեքը 0 է:

Հիմնական միջոցների մաշվածության ծախսը ըստ ծախսային հոդվածների բաշխվել է հետևյալ կերպ.

	2024	2023
Իրացման ծախսեր	53,623	39,936
Արտադրական ծախսումներ	19,784	15,439
Վարչական ծախսեր	392	422
Ընդամենը	73,800	28,796

7. Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
Մկզբնական արժեք		
Առ 01.01.2024թ.	13,658	13,658
Գնում Օտարում/դուրս գրում	358	358
Առ 31.12.2024թ.	14,016	14,016
Ամորտիզացիա		
Առ 01.01.2024թ.	(8,303)	(8,303)
Հաշվարկ Օտարում/դուրս գրում	(1,361)	(1,361)
Առ 31.12.2024թ.	(9,664)	(9,664)
Հաշվեկշռային արժեք		
Առ 31.12.2023թ.	5,354	5,354
Առ 31.12.2024թ.	4,352	4,352

	2024	2023
Իրացման ծախսեր	1,292	1,835
Վարչական ծախսեր	69	-
Ընդամենը	1,361	1,835
Ընդամենը	211,744	220,089

8. Պաշարներ

	31.12.2024	31.12.2023
Ապրանքներ	932,235	1,767,424
Այլ պաշարներ	245	4,164
Ընդամենը	932,480	1,771,588

9. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31.12.2024	31.12.2023
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	201,398	177,257
Տրված ընթացիկ կանխավճարներ	10,346	12,060
Դեբիտորական պարտքեր հարկերի գծով	-	30,755
Այլ դեբիտորական պարտքեր	-	220,089
Ընդամենը	211,744	189,333

10. Տրված փոխառություններ

Փոխառությունը տրվել են կապակցված կողմին անտոկոս և գրավով չապահովված կարճաժամկետ փոխառության պայմանագրի հիման վրա:

11. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2024	31.12.2023
Ազգային արժույթի դրամարկդ	1,443,937	362,670
Արտարժույթի դրամարկդ	30,145	27,461
Բանկային ընթացիկ հաշիվներ ՀՀ դրամով	114,270	143,743
Բանկային ընթացիկ հաշիվներ արտարժույթով	372	145
Ընդամենը	1,588,724	534,019

12. Մեփական կապիտալ

12.1. Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը հաշվետու ամսաթվի դրությամ կազմում է 69,514 հազար դրամ, իսկ արդեն սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ տեղի է ունեցել կանոնադրական կապիտալի համալրում դրամական միջոցների ներդրմամբ և այն կազմում է 80,269 հազար դրամ:

12.2. Զբաղիված շահույթ և շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով: Հաշվետու տարում Ընկերությունը հայտարարել վճարել է 157,895 հազար դրամ շահաբաժիններ: Հաշվետու ամսաթվից մինչև սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը Ընկերությունը հայտարարել և վճարել է 215,100 հազար դրամ շահաբաժիններ:

13. Ստացված փոխառություններ

Փոխառությունները ստացվել են ընկերության միակ մասնակցից՝ գրավով չապահովված անտոկոս փոխառության պայմանագրերի հիման վրա: Սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ստացված փոխառությունների գծով պարտավորությունն ամբողջությամբ մարվել է:

14. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2024	31.12.2023
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	1,900,899	1,845,490
Կրեդիտորական պարտքեր վարձավճարների գծով	31,778	31,778
Ստացված կանխավճարներ	26,178	30,070
ԿՊ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	55,757	4,150
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	6,885	7,534
Ընդամենը	2,021,497	1,919,022

15. Պահուստներ

Այս հոդվածում ներկայացված են աշխատակիցների կուտակված արձակուրդների գծով կարճաժամկետ հատուցումները: Պահուստավորումը կատարվում է յուրաքանչյուր տարեվերջի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդի համեմատությամբ աճի կամ նվազման գումարով: Ակնկալվում է, որ դրամական արտահոսքերը տեղի կունենան հաջորդ տարվա ընթացքում՝ հերթական ամենամյա արձակուրդերն օգտագործելիս: Զեղչման ազդեղությունը համարվել է ոչ էական և պահուստը չափվել է գնահատված դրամական արտահոսքերի անվանական գումարով:

16. Հասույթ

	- 2024 -	- 2023 -
Ապրանքների վաճառքից հասույթ	10,505,679	9,192,904
Արտադրանքի վաճառքից հասույթ	702,538	740,530
Արտարժույթի առուվաճառքից հասույթ	94,582	115,396
Ծառայությունների մատուցումից հասույթ	393,047	330,480
Ընդամենը	11,695,847	10,379,310

17. Ինքնարժեք

	- 2024 -	- 2023 -
Վաճառված արտադրանքի ինքնարժեք	574,400	615,896
Վաճառված ապրանքների ինքնարժեք	9,413,468	8,280,880
Ընդամենը	9,987,868	8,896,776

18. Իրացման ծախսեր

	- 2024 -	- 2023 -
Աշխատանքի վճարման գծով ծախսեր	563,463	507,308
Վարձակալական ծախսեր	381,333	381,333
Իրացման կոմունալ ծախսեր	133,031	133,365
Հիմ.միջ.մաշվածության, նորոգման և սպաս.գծով ծախսեր	73,338	59,037
Ապրանքների և արտադրանքի փաթեթավորման և տարրայի ծախսեր	41,839	46,508
Պահպանության ծախսեր	13,380	12,825
Իրացման տրանսպորտային և ապահովագր.ծախսեր	7,711	5,945
Մարկետինգի և գովազդի ծախսեր	1,370	8,185
Իրացման այլ ծախսեր	14,519	17,240
Ընդամենը	1,229,984	1,171,747

19. Վարչական ծախսեր

	- 2024 -	- 2023 -
Աշխատանքի վճարման գծով ծախսեր	32,475	33,858
Բանկային ծառայությունների գծով ծախսեր	44,992	40,565
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	15,195	5,866
Չփոխհատուցվող հարկերի գծով ծախսեր	6,567	7,318
Խորհրդատվական և ծրագրային սպասարկման ծախսեր	5,250	2,602
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	2,951	2,783
Այլ վարչական ծախսեր	1,663	4,257
Ընդամենը	109,092	97,249

20. Այլ ծախսեր

	- 2024 -	- 2023 -
Արժեքների պակասորդից և փչացումից կորուստներ	47,858	30,661
Ծախսեր տույժերից և տուգանքներից	34,124	245
Անձնակազմի սննդի ապահովման ծախսեր	18,530	18,770
Ծախսեր արձակուրդայինի պահուստի գծով	17,794	11,026
Արտարժույթի փոխարկման ծախսեր	5,895	8,914
Այլ ծախսեր	9,261	2,689
Ընդամենը	132,463	72,305

21. Շահութահարկ

21.1. Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)

	- 2024 -	- 2023 -
Ընթացիկ հարկի գծով ծախս	(51,523)	(30,664)
Հետաձգված հարկի գծով եկամուտ	3,203	1,985

Շահութահարկի գծով ընդհանուր ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում **(48,320)** **(28,679)**

2024 և 2023 թվականների շահութահարկը հաշվարկելիս ՀՀ օրենսդրությանը համապատասխան կիրառվել է 18 % դրույքաչափը:

21.2. Շահութահարկի արդյունավետ հարկային դրույքաչափի համադրում

	- 2024 -		- 2023 -	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	265,246	100%	178,936	100%
Շահութահարկ	(47,744)	18%	(32,208)	18%
Չնվազեցվող / (չհարկվող) հոդվածներ	20,993	8%	- 8,580	-5%
Հարկվող շահույթ	286,239		170,356	
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս				
համապարփակ ֆինանսական արդյունքների	(51,523)	19.4%	(30,664)	17.1%
մասին հաշվետվությունում				

21.3. Հետաձգված հարկ

		31.12.2024		
		Պարտավորության հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Նվազեցվող ժամանակավոր տաբերություն
Աշխատակիցների արձակուրդային պահուստի գծով		28,820	-	28,820
Ընդամենը				28,820
Հարկի դրույքը				18%
Հետաձգված հարկային ակտիվ				5,188
		31.12.2023		
		Պարտավորության հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Նվազեցվող ժամանակավոր տաբերություն
Աշխատակիցների արձակուրդային պահուստի գծով		11,026	-	11,026
Ընդամենը				11,026
Հարկի դրույքը				18%
Հետաձգված հարկային ակտիվ				1,985

22. Կապակցված կողմերի հետ գործարքներ

Ընկերության կապակցված կողմերը ներառում են Ընկերության հիմնադիրը, հիմնական ղեկավար անձնակազմը, համատեղ հսկողության տակ գտնվող կազմակերպությունները:

22.1. Առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրություն

Ընկերության առանցքային ղեկավար անձնակազմում ներառված է Ընկերության տնօրենը և ֆինանսական տնօրենը, որոնց կարճաժամկետ հատուցումները ներառյալ հարկերը կազմել են

	- 2024 -	- 2023 -
Հաշվարկված աշխատավարձ և հավասարեցված վճարումներ	13,022	11,050

22.2. Ղեկավարությանը տրված փոխառություններ

Ընկերությունն ունի տնօրենին տրված կարճաժամկետ, գրավով չապահովված անտոկոս փոխառություններ, որի գծով շարժը և մնացորդները հետևյալն են.

Մնացորդ առ 01.01.2024թ.	182,996
Փոխառության տրամադրում	7,200
Մարումներ	-
Մնացորդ առ 31.12.2024թ.	190,196

22.3. Գործարքներ մասնակցի հետ

- Տարածքի վարձակալություն

Մնացորդ առ 01.01.2024թ.	31,778
Հաշվեգրված վարձավճարներ	381,333
Մարումներ	(381,333)
Մնացորդ առ 31.12.2024թ.	31,778

- Ստացված փոխառություններ

Մնացորդ առ 01.01.2024թ.	655,400
Փոխառության ստացում	75,000
Փոխառության մարումներ	-
Մնացորդ առ 31.12.2024թ.	730,400

22.4. Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Գործարքներ/մնացորդներ	31.12.2023	Ավելացում	Նվազեցում	31.12.2024
Ապրանքի վաճառքներ	1,437	14,513	14,986	964
Ապրանքի գնումներ	21,646	34,630	41,122	15,154
Տրված փոխառություններ	-	984,000	846,000	138,000
Ստացված փոխառություններ	-	436,336	436,336	-

23. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական ռիսկերի կառավարումն Ընկերության համար ունի կարևոր նշանակություն: Դրանք հիմնականում կապված են պարտքային, իրացվելիության և արտադրության ռիսկերի հետ: Ընկերությունը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

23.1. Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պայմանագրային մյուս կողմն ի վիճակի չի լինում կատարելու իր պարտավորությունները, որի հետևանքով Կազմակերպությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է անհատական հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների պարտքային ռիսկը կառավարվում է դրամական միջոցները բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով: Դրանց գծով ակնկալվող պարտքային կորուստների մեծությունը գնահատվել է զրո:

23.2. Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք հիմնականում բխում են գործառնական գործունեությունից:

Ա) Արտարժույթային ռիսկ

Ընկերությունն ունի արտարժույթային վարկեր և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Ստորև ներկայացված է արտարժույթի ռիսկին Ընկերության ենթարկվածությունը ըստ ակտիվների և պարտավորությունների տեսակների.

	31.12.2024			31.12.2023		
	USD	EUR	RUB	USD	EUR	RUB
Ֆինանսական ակտիվներ						
-Դրամական միջոցներ	1,614	35,020	3,115,482	35,677	4,420	4,475,391
Ընդամենը	1,614	35,020	3,115,482	35,677	4,420	4,475,391
Ֆինանսական պարտավորություններ						
-Կրեդիտորական պարտքեր	0	0	28,269	252	0	0
Ընդամենը	0	0	28,269	252	0	0
Զուտ արդյունք	1,614	35,020	3,087,213	35,425	4,420	4,475,391

Բ) Տոկոսադրույքային ռիսկ

Ընկերությունը տոկոսադրույքի ռիսկեր չունի:

23.3. Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը պարտավորությունները մարելու նպատակով համապատասխան դրամական միջոցների սակավության կամ բացակայության ռիսկն է: Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել և անհրաժեշտ միջոցները, որոնք թույլ կտան մարելու դրամական հոսքերի հետ կապված պարտավորությունները:

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները:

Ստորև ներկայացված է Ընկերության ակտիվների ընթացիկ իրացվելիության վերլուծությունը.

	31.12.2024	31.12.2023
Ընթացիկ ակտիվներ	2,871,275	2,526,348
Ընթացիկ պարտավորություններ	2,072,350	1,930,048
Ընթացիկ իրացվելիության գործակից	1.39	1.31
Արագ իրացվելի ակտիվներ*	1,938,795	754,760
Ընթացիկ պարտավորություններ	2,072,350	1,930,048
Արագ իրացվելիության գործակից	0.94	0.39
Դրամական միջոցներ և համարժեքներ	1,588,724	534,019
Ընթացիկ պարտավորություններ	2,072,350	1,930,048
Բացարձակ իրացվելիության գործակից	0.77	0.28

* Արագ իրացվելի ակտիվների կազմում ներառվել են Ընկերության բոլոր ընթացիկ ակտիվները՝ բացառությամբ վաճառքի համար կառուցվող ակտիվների:

Ֆինանսական հաշվետվություններ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

«Պար-Արտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

24. Պայմանական դեպքեր

ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը գտնվում է զարգացման փուլում, որի հետևանքով ապահովագրության շատ տեսակներ դեռևս չունեն լայն կիրառում: Քանի դեռ Ընկերության գույքը և գործունեությունը համապատասխան ձևով ապահովագրված չեն, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ վերջինիս գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

բ) Դատական գործեր

Պետական մարմինների և տնտեսավարող սուբյեկտների կողմից ընդդեմ Ընկերության չեն ներկայացվել այնպիսի հայցադիմումներ, որոնք կարող են էական սպառնալիք հանդիսանալ վերջինիս նորմալ գործունեության համար:

գ) Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի Հանրապետությունում նոր ձևավորված հարկային համակարգին բնորոշ է հաճախակի փոփոխվող օրենսդրությունը, որը հաճախ հստակ չէ և մեկնաբանությունների տեղիք է տալիս: Հարկերը ենթակա են ուսումնասիրության համապատասխան իրավասու մարմինների կողմից, որոնց օրենքով վերապահված է իրավունք կիրառելու պատժամիջոցներ (տուգանքներ, տույժեր) տնտեսավարող սուբյեկտների և նրանց պաշտոնատար անձանց նկատմամբ՝ նրանց կողմից օրենսդրությունը խախտելու համար: Այս պայմաններում գոյություն ունի ռիսկ, որ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքում կարող են առաջանալ լրացուցիչ հարկային պարտավորություններ:

Թեև Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ հնարավոր լրացուցիչ հարկային պարտավորությունները չեն կարող էական լինել և դրանց գծով պահուստի ձևավորման անհրաժեշտությունը բացակայում է: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինների մեկնաբանությունները կարող են տարբեր լինել՝ դրանցից բխող էական ազդեցություններով:

դ) Պայմանական պարտավորություններ

Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ չունի այլ անձանց տրամադրած երաշխավորություններ, երաշխիքներ և այլ պայմանական պարտավորություններ:

ե) Գրավադրված ակտիվներ

Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ գրավադրած ակտիվներ չունի:

25. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել հաշվետու ամսաթվից հետո մինչև վավերացման ամսաթիվը ընկած ժամանակահատվածում:

26. Ֆինանսական հաշվետվությունների հաստատում

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են 2025թ հունիսի 19-ին: